## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 1.** «Աշխարհագրական անվանումների մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 1999 թվականի նոյեմբերի 23-ի ՀՕ-21 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում.

1. 3-րդ մասի 3-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Նշանավոր որեւէ անհատի անվամբ անվանակոչում կամ անվանափոխում կարող է կատարվել նրա մահվանից առնվազն 5 տարի հետո: Բացառիկ դեպքերում՝ ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտները կարող են անվանակոչվել կամ անվանափոխվել նաեւ մինչեւ նշանավոր որեւէ անհատի մահվան 5 տարին լրանալը՝ համապատասխան հանրային լսումներ կազմակերպելու միջոցով:»:

2. լրացնել նոր 5-րդ մաս.

«5. Մինչեւ նշանավոր որեւէ անհատի մահվան 5 տարին լրանալը՝ ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչումը կամ անվանափոխումը կատարվում է համապատասխան համայնքի ավագանու որոշմամբ՝ այդ նպատակով անցկացված հանրային լսումների արդյունքների հիման վրա:»:

**Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը~~ում «մարզպետներին» բառից հետո լրացնել «բացառությամբ~~ լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ»

«~~Ն~~Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների~~, որոնց~~ անվանակոչման կամ անվանափոխման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: